

<<Հրդեհների վիճակագրություն>>

2014թ. 3 ամիսների ընթացքում ՊՀ և ՏԱ տեսչության կողմից հաշվառվել է 505 հրդեհ՝ շուրջ 196 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհներից զոհվել է 17, վնասվածքներ ստացել՝ 20 մարդ: Ոչնչացել է 9 շինություն, 4 միավոր ավտոտրանսպորտ, շուրջ 267 տոննա անասնակեր:

Հրդեհների քանակը նվազել է Տավուշի մարզում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների 52.27%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 47.73%-ը՝ գյուղական բնակավայրերում: Դրանց 41.98%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 37.62%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 4.35%-ը՝ ավտոմեքենաներում, 4.35%-ը՝ գյուղատնտեսական նշանակության օբյեկտներում, 3.56%-ը՝ ոչ բնակելի մասնավոր օբյեկտներում, 2.17%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 1.18%-ը՝ արտադրական շենքերում, իսկ 4.79%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 58.41%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 15.84%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 10.69%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 5.34%, հրկիզումները՝ 1.38%:

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 9-ը խոշոր և առավել խոշոր են, որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է շուրջ 154.7 միլիոն դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 78.96%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

1) 02.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, <<Մանանա գրեյն>> ՍՊԸ ալրաղացի պահեստ՝ 76 081 755 դրամ:

2) 22.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Ավշար, շինանյութի պահեստ՝ 30 000 000 դրամ:

3) 05.01.14թ.՝ Սյունիքի մարզ, գ. Աջաբաջ, գոմի տանիք՝ 21 030 000 դրամ:

4) 15.01.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, առևտրի սրահ՝ 9 000 000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում թվով 17 հրդեհներում զոհվել է 17 քաղաքացի: Չոհերով հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, հրկիզումը, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների և վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը: Չոհերն արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. ք.Երևան՝ 4, Արմավիր՝ 3, Արարատ, Արագածոտն և Կոտայք՝ երկուական, Շիրակ, Սյունիք, Տավուշ և Լոռի՝ մեկական: Դրանց գերակշիռ մասը՝ 15-ը, գրանցվել է բնակելի հատվածում, որոնցից 7-ը տարեց մարդիկ են:

Վնասվածքներ են ստացել 20 քաղաքացիներ, որոնցից 13-ը՝ բնակելի հատվածում, 4-ը՝ ավտոմեքենայում, 3-ը՝ ԱԳԼՃԿ-ում: Վնասվածքները գրանցվել են Լոռիում՝ 6, ք.Երևանում՝ 5, Գեղարքունիքում՝ 4, Արմավիրում՝ 3, Արագածոտնում և Շիրակում՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են երեխաների խաղալը կրակի հետ, ճանապարհատրանսպորտային պատահարը, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը, հրկիզումը և պայթյունը:

Դատաքննչական մարմիններ են ուղարկվել 64 հրդեհի նյութեր, որոնցից 17-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Հարուցվել է 7 քրեական գործ, որոնցից 1-ը կասեցվել է, 2-ը՝ կարճվել, իսկ 37 նյութեր գտնվում են վարույթում: